

դասաւանդութիւն. կէսօրէն յետոյ դասաւանդութիւն տեղի կ'ունենայ ժամը 2-4: Երեքշաբթի կէսօրէն յետոյ, եւ հինգշաբթի բոլոր օրը հանգիստ է: Ոչ հայ եւ ոչ արիւմտական դպրոցներուն մէջ 5 տարեկանէն պակաս տղաք ընդունելու հրաման կայ: Աւելի փոքրերը կ'առնուին Ռափայէլեան ստորնագոյն դպրոցը որ կ'երևի մանկապարտէզի պէս բան մըն էր: Հարկ է հայերէն լեզուն գիտնալ՝ հունգարական դպրոցն ընդունուելու համար: Գպրոցական տղոց մարմնոյ առողջութեանն ու մաքրութեանը պէտք է հող տարուի, «որպէսզի առանց լուացուելու եւ երկայն եղունգներով դպրոց չգան»: բորոտներն ու տարափոխիկ հիւանդութիւն ունեցողները առանց բացառութեան կը մերժուին դպրոցէն: Վարժապետներուն կամքին ձգուած չէ տղայ պատժելը. մանաւանդ մեծագոյն պատիժներ սահմանելը վերապահուած է դպրոցի տեսչութեան: Թոյլ տրուած չէ նոյնիսկ ապտակել տղաքը: Ուսուցիչները ուշադրութիւն պէտք է ընեն որպէսզի տղաքը յաճախ դպրոցէն դուրս չմնան: Գպրոցը դեռ ծառայ չունի. անոր տեղը կը լեցնէ «ամէն դասու մէկ» մէկ մեծագոյն եւ ամենէն ուժով տղան», որ ամէն ամիս 6 քրայցէր վարձ կ'ընդունի իր աշակերտակիցներէն: Աշակերտներուն արգիլուած է ձիորսութիւնն ու որսորդութիւնը, սահնակն ու բալիսիրը, ծխելը, վառօդով խաղալ, հրացան կրել, թռչուն բռնել, թուղթ խաղալ, հայհոյել, պարտէզները մտնել, գնդակ խաղալ, փողոցը պոռալ, Բարեկենդանի խնդկատակութեանց մասնակցիլ. կ'արտօնուին միայն «ափուճ» խաղալ: Հրաման կայ բաղնիք երթալու՝ ծնողքին, ազգականներու եւ ուսուցիչներուն ընկերակցութեամբ: Տարին անգամ մը հրաման կայ «Թատերախաղութեան» կամ «կաքաւախաղութեան»: Ամէն տարի Չատկի մօտ եւ դպրոցական տարին լըմըննալու ատեն տեղի կ'ունենան քննութիւններ. հրապարակաւ կը կարդացուի դասակարգութիւնը. լաւ սորվողները եւ փութաջանները մրցանակ կ'ընդունին: Գպրոցին վերատեսչութիւնը կը կազմեն դատաւորը, աւագերէցը եւ քաղաքային խորհրդին մէկ անդամը: Լաւ կը վարձատրուէին ուսուցիչները: Կրթութիւնը պարտաւորիչ էր 5-13 տարեկան:

Բայց Եղիսաբէթուպոլսոյ համար նախաինամութիւն մը կ'ըլլայ Աղեքսանդր Ռափայէլ Ղարամբան հնդկահայը «զոր Թրանսիլվանիա բերաւ իր ազգին ունեցած սէրը», կ'ըսէ հայր Գովրիկեան: Ձրաւականացաւ միայն ազջկանց դպրոցով, այլ 1842 Յունիս 2 թուակիր դրութեամբ մը, — զոր նոյն տարուան Նոյեմբեր 29-ին վաւերացուց Ֆէրտինանտ Ա. կայսեր մէկ հրովարտակը, — 15,000 Ֆիօրին թողուց Եղիսաբէթուպոլիս քաղաքին, որպէսզի վարժարան մը բացուի իր անունով, ուր կարենան մտնել որեւէ ազգէ ու կրօնէ տղաք, պայմանաւ որ հոն ընդունուող հայ տղաքը նախապէս սորված ըլլան իրենց մայրենի լեզուն: Վարժարանին վերահսկողը պիտի ըլլար քաղաքին դատաւորը, եւ ուսուցիչները պիտի ընտրէր ինքը բարերարը: Բարերարին ներկայութեան ժողովի մը մէջ կ'որոշուի որ «Անտոնեան հայրերը հինգ տարին լմնցնող տղաքը հայ դպրոցը ընդունին՝ ոչ թէ եօթը տարեկանէն սկսեալ, որպէսզի չըլլայ թէ վարժարանէն ետ մընան. վասնզի հայերէն սորվիլ պէտք է, եւ առանց հայերէն գրելու կարգալ գիտնալու՝ տղաք վարժարան չեն ընդունուիր»:

1848-1853, խռովութեանց պատճառով, փակ էր դպրոցը: 1853-ին է որ վերստին սկսաւ կրթական կեանքը, բայց Ռափայէլի թողած եկամուտները բաւական չըլլալուն՝ ապահովուեցաւ նաեւ Գէորդ Գամէլլէրեան կտակին Վիեննայի կալուածին եկամուտը, Հայնալտ Կալսիկոպոսին ջանքերով, որուն յանձնուեցաւ ընդհանուր հսկողութիւնը: Գպրոցը որ առաջ կը կոչուէր “Elisabethopolina Schola Latina Raphaelina”, սկսաւ կոչուիլ, 1855-էն յետոյ, “Schola Privata Latina Raphaelina”:

1863-69-ին 34 էր աշակերտներուն թիւը, իսկ յաջորդ տարին 38:

Հասարակութիւնը 1881-ին սկսաւ մտածել վարժարանին արմատական փոփոխութեանը վրայ: Բայց ապրազիւն մնացին բոլոր ջանքերը: Այնպէս որ 1891-ին դպրոցը յանձնուեցաւ պետութեան:

### ՉԻՔ-ՍԻՔՎԻՉԻ ՄԷՁ

Տեղեկութիւն մը չկայ թէ դպրոց ունեցած են հոս հայերը: Միայն հայր Բժշկեան տեղ մը կը յիշէ (ձանապարհորդութիւն ի Լե-